



Ինչպե՞ս փնտրել քարտեզի օբյեկտ:

Քարտեզի օբյեկտ փնտրելու համար սեղմեք  կոճակը:



Փնտրում կատարելու համար կբացվի առանձին պատուհան:



Եթե ցանկանում եք, որ փնտրումը կատարվի ամբողջ աշխարհի մասշտաբով, ապա անհրաժեշտ է ընտրած թողնել “World map” օպցիան:

Եթե ցանկանում եք, որ փնտրումը կատարվի միայն քարտեզի այն հատվածի վրա, որը բացված է Ձեր էկրանին, ընտրեք “Visible area” օպցիան:

Տեքստային դաշտում մուտքագրեք փնտրվող օբյեկտի անվանումը և սեղմեք [Search] կոճակը:

Փնտրման արդյունքը կհայտնվի պատուհանի ներքևի մասում:




Ստացված արդյունքները ֆիլտրելու համար գրեք ֆիլտրող բառը երկրորդ տեքստային դաշտում և սեղմեք [Ok]: Օրինակ, ստացված ցուցակից թողնենք այն Armenia անունը պարունակող օբյեկտները, որոնց տիպը հյուրանոց է: Դրա համար ֆիլտրման դաշտում անհրաժեշտ է գրել “hotel” (հյուրանոց) և սեղմել [Ok] կոճակը:



Ֆիլտրը անջատելու համար, պետք է ուղղակի ջնջել մուտքագրված ֆիլտրող բառը կամ տառը և սեղմել [Ok] կոճակը:

Գտած օբյեկտը քարտեզի վրա ստանալու համար անհրաժեշտ է մկնիկով սեղմել օբյեկտի տողի վրա,

որից հետո  կոճակին: Քարտեզը կբացվի այն տեղում, որտեղ գտնվում է փնտրվող օբյեկտը: Փնտրվող օբյեկտը քարտեզի վրա կերևա տարբերվող գույնով:

